

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

1952-ի հոկտեմբերին տողերիս հեղինակը Մոսկվայի Լոմոնոսովի անվ. պետական համալսարանում պաշտպանեց «Գեղարվեստական գրականության ճանաչողական և դաստիարակչական նշանակությունը» թեմայով թեկնածուական ատենախոսությունը և դարձավ Հայաստանում գեղագիտության գծով առաջին գիտության թեկնածուն: 1953 թ. ես հրավիրվեցի ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի սեկտոր՝ որպես ավագ գիտաշխատող և անմիջապես անցա գիտական հիմնահարցերի մշակմանը՝ հրատարակելով մի շարք հոդվածներ, ինչպես նաև «Կ տՏջվՈՂՈՅպսՖվՏՎ ջվՈփպվՌԻՌ ՌրՍցրրՅՁՈՂ» (1959) մենագրությունը: Այդ գիրքը, որին ես այժմ ավելի քան զիջողաբար եմ վերաբերվում, ժամանակին լավ ծառայություն մատուցեց, մտցնելով ինձ գեղագետների մեծ ընտանիք՝ արժանացավ մի շարք դրական գրախոսականների, տարածում գտավ ոչ միայն ԽՍՀՄ-ում, այլև արտերկրում՝ դառնալով յուրատեսակ այցետոմս ոչ միայն հեղինակի, այլև Հայաստանի գեղագիտական հարցերի մշակման նորահայտ կենտրոնի համար: Օրինակ, հայտնի դարձավ, որ գիրքը քննարկվել էր Բուլղարիայի ԳԱ փիլիսոփայության ինստիտուտի գիտական խորհրդում և որոշում էր ընդունվել իրենց մոտ խթանել այդօրինակ խնդիրների ուսումնասիրությունը:

Այդ փաստը նպաստեց բուլղարացի փիլիսոփաների հետ ջերմ ու հարատև բարեկամական հարաբերությունների հաստատմանը: Մենք բազմաթիվ հանդիպումներ ունեցանք նրանց հետ Բուլղարիայում, Մոսկվայում, միջազգային կոնգրեսներում և Երևանում, որտեղ ես առանձին-առանձին, ջերմորեն ընդունեցի Կրիստյո Գորանովին, Ատանաս Ստյոկովին, Ստեֆան Անգելովին: Ես առիթ ունեցա ծանոթանալու նաև Բուլղարիայի ԳԱ նախագահի՝ փիլիսոփա և գեղագետ Տոդոր Պավլովի հետ: Բուլղարիայի հանդեպ գիտական հետաքրքրության յուրովի դրսևորում էր մեր աշխատակից Ռ. Գ. Նավասարդյանի ուսումնասիրությունը՝ «Նոր Բուլղարիայի էսթետիկական գրականությունը», որը տպագրվեց 1967-ին, «Էսթետիկայի հարցեր» գրքաշարի 1-ին գրքում: Այդ ժողովածուն ռուսերեն տեքստով իբրև նվեր ուղարկվեց Բուլղարիայի փիլիսոփայության ինստիտուտին: Ջերմ հարաբերություններ հաստատվեցին նաև Գերմանիայի, Լեհաստանի, Ռումինիայի, Հունգարիայի, Իտալիայի, Չեխոսլովակիայի գեղագետների հետ:

Ես շարունակում էի միայնակ զբաղվել գեղագիտության տեսության և պատմության հարցերով, ու թեև մերթ ընդ մերթ դրսից հրավիրում էի առանձին մասնագետների՝ այլևայլ հարցեր համատեղ լուծելու համար, այնուամենայնիվ, գնալով ավելի ու ավելի որոշակիորեն զգացվում էր կոլեկտիվ աշխատանքի անհրաժեշտությունը: Ելնելով ստեղծված վիճակից, որ Հայաստանում գեղագիտական հետազոտությունների հետագա ծավալման հնարավորություն էր տալիս, 1962 թ. առաջարկեցի փիլիսոփայության սեկտորի կազմում ստեղծել գեղագիտության խումբ, որն, ըստ էության, դարձավ գեղագիտական հետազոտությունների առաջին գիտական օջախը հանրապետությունում:

Ասեմ, որ Հայրենական մեծ պատերազմից անմիջապես հետո միանգամից դրսևորվեց պետական շահագրգիռ վերաբերմունքը երկրում գեղագիտության համակողմանի զարգացման հանդեպ: Ամբողջ երկրում ամենուրեք հայտարարվեց ընդունելություն ասպիրանտուրա գեղագիտության գծով (այդ քաղաքականությունը պահպանվեց և հետագա տարիներին): Շնորհիվ դրա, գեղագետների «ընտանիքը» գնալով բազմանում էր՝ իր ուղեծրի մեջ ընդգրկելով մասնագետների նոր սերունդներ: Այնուհետև՝ շնորհիվ լավ կարգավորված տեղեկատվության, ԽՍՀՄ-ում և արտերկրում գրքային նորությունների մասին և երկրով մեկ գրական արտադրանքը տրամախաչորեն առաքելու խելացի քաղաքականության, մեծ երկրի ցանկացած վայրում մասնագետները կարող էին տեղյակ լինել գեղագիտության ոլորտում կատարվածի և շարունակաբար հրատարակվող գեղագիտական գրականության մասին: Դրական նշանակություն ունեին արտասահմանյան (թեև սակավաթիվ) հեղինակների գործերի՝ ռուսերեն և այլ լեզուներով, ինչպես նաև խորհրդային գեղագետների աշխատությունների թարգմանությունները օտար լեզուներով:

Տարբեր գիտաժողովները՝ համամիութենական գիտաժողովները և գիտական նստաշրջանները իրոք որ համախմբում էին խորհրդային գեղագետներին մի միասնական ընտանիքի մեջ: Իսկ միջազգային կոնգրեսներին մասնակցությունը նպաստում էր արտասահմանյան գործընկերների հետ անձնական կապերի հաստատմանը և խորհրդային գեղագիտության՝ միջազգային ասպարեզ դուրս գալուն: ԽՍՀՄ ԳԱ նախագահության հասարակական գիտությունների սեկցիային կից ստեղծվեց գեղագիտության հիմնախնդիրների գիտական խորհուրդ, որը համակարգում էր երկրում կատարվող ամբողջ աշխատանքը գեղագիտության բնագավառում (Հայաստանից այդ խորհրդի անդամ լինելու պատիվ ուներ տողերիս հեղինակը): Այդ բոլորի շնորհիվ XX դ. երկրորդ կեսը դարձավ ԽՍՀՄ-ում գեղագիտական գիտության աննախադեպ վերապայման, նրա համակողմանի զարգացման, գեղագիտության հիրավի ոսկե դար: Ի դեպ, դա համահունչ էր գեղագիտության նկատմամբ հետաքրքրության ընդլայնմանը արտասահմանյան երկրներում, գուցե միայն խորհրդայինի գերազանցությամբ, գեղագիտական ոլորտի մեջ ներգրավված մասնագետների թվով, ուսումնասիրությունների մասշտաբներով, ամենալայն ընդգրկումով, բազմադիմությունամբ և, որ ամենակարևորն է (ինչն ընդունվել էր ժամանակին շատերի կողմից), ԽՍՀՄ-ում գեղագիտական հիմնահարցերի մշակումների գիտական մակարդակի և խորության գերազանցությամբ:

Այս բոլորն ասվեց, որ պարզ լինի, թե ինչ մթնոլորտում և տեսական ինչ բարձր մակարդակի պայմաններում էին ծավալվում փիլիսոփայության սեկտորի և ապա փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գեղագիտության խմբի (հետագայում՝ բաժնի) աշխատանքները: Մենք միանգամից հաղորդակից դարձանք համաշխարհային չափորոշիչներին և ոգևորությամբ ու ամենայն լրջությամբ լծվեցինք աշխատանքի: Խմբում աշխատելու համար հրավիրվեցին տակավին երիտասարդ, բայց գիտության ասպարեզում արդեն իրենց դրսևորած, ընդունակ հետազոտողներ՝ գիտությունների թեկնածուներ Ս. Թոփչյանը, Ժ. Ստեփանյանը, Ա. Քալանթարը, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններ պատրաստող ևս երկու երիտասարդ աշխատակիցներ Գ. Հակոբյանը և Հ. Ավետիսյանը: Ցավոք, նրանցից մեկը՝ շատ խոստումնալից Հենրիկ Ավետիսյանը, անսպասելիորեն վախճանվեց՝ չհասցնելով պաշտպանել արդեն ավարտած «Վրթանես Փափագյանի էսթետիկական հայացքները» ատենախոսությունը, որը մենք հետո

հրատարակեցինք «Հայ էսթետիկական մտքի պատմությունից» գրքաշարի երկրորդ գրքում (1976):

Տարբեր տարիներին ասպիրանտուրա ընդունվեցին Ե. Հակոբջանյանը, Մ. Քացախյանը, Ծ. Չալոյանը, Պ. Նահապետյանը, Վ. Շահնագարյանը, Լ. Լաճիկյանը, Ս. Արզումանյանը: Նրանցից հինգը պաշտպանեցին թեկնածուական, իսկ հիշատակվածներից առաջին երկուսը՝ նաև դոկտորական ատենախոսություններ: Մյուսները հանդես եկան հրապարակումներով: Հետագայում գեղագիտական հարցերի մշակմանը միացան Ս. Թովմասյանը, Ժ. Վարտանովան, Կ. Միրումյանը, Ռ. Միրումյանը, Ս. Հարությունյանը, Ա. Օսիպյանը: Բացի այդ, մեր օջախի օրինակով, գեղագիտության հարցերի մշակմամբ սկսեցին զբաղվել այլ հիմնարկների աշխատակիցներ, որոնց հետ նույնպես մենք սկսեցինք համագործակցել (Է. Ջրբաշյա-նը և Վ. Օսիպյանը՝ Երևանի պետական համալսարանից, Հ. Մայրեայա-նը՝ Մոսկվայից և ուրիշներ): Իսկ Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտը ինձ հանձնարարեց ստանձնել երկու ասպիրանտներին (Պ. Գազարյան, Ա. Ավետիսյան) դեկավարությունը, որոնք հաջողությամբ պաշտպանեցին իրենց թեկնածուական ատենախոսությունները:

Գեղագիտության խումբը արագ և հաստատորեն գրավեց իր տեղը հանրապետությունում և Միությունում՝ ապրելով իր լիարյուն կյանքով. գրվում և պաշտպանվում էին ատենախոսություններ, հրատարակվում էին գրքեր և հոդվածներ հանրապետությունում, Մոսկվայում և արտասահմանում: Մեզ քննարկման կամ ընդդիմախոսության համար ուղարկվում էին ատենախոսություններ այլ հիմնարկներից և երկրի տարբեր քաղաքներից:

Մեր ինստիտուտի գեղագետների նախաձեռնությամբ և կառավարության 1970 թ. որոշմամբ հանրապետության միջնակարգ հանրակրթական դպրոցներում մտցվեց (առաջինը երկրում) «Էսթետիկայի և էթիկայի հիմունքներ» դասընթացը, որի ծրագիրը կազմվել էր իմ մասնակցությամբ:

Կարելի է վստահորեն արձանագրել, որ հայ գեղագիտական մտքի բազմադարյան պատմության մեջ հատուկ տեղ են գրավում խորհրդային տարիները, երբ պետական հովանու ներքո բուռն ու համակողմանի զարգացում ստացան գեղագիտության տեսության և պատմության հարցերի ծավալուն գիտական հետազոտությունները: Հայ գեղագետները ներգրավվեցին համաշխարհային գեղագիտությանը հուզող հրատապ հարցերի մշակմանը՝ առաջարկելով դրանց լուծման յուրովի տարբերակներ: Դրանցից էին մասնավորապես գեղեցիկի, արվեստների դասակարգման, արվեստի իմացաբանական էության, գեղագիտական պահանջմունքի բնույթի, արվեստի առանձնահատուկ առարկայի, նորագույն ուղղությունների քննական վերլուծությունը և այլ հիմնարար հարցեր: Այդ բոլոր հաջողություններում որոշիչ դեր կատարեցին Հայաստանի Գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության սեկտորը և ապա՝ նրա ժառանգորդ՝ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտը:

Բացի գեղագիտության տեսական հարցերից, ինստիտուտի աշխատակիցները լրջորեն անդրադարձնում էին գեղագիտության պատմության հարցերին: Տպագրվեցին հոդվածներ՝ նվիրված Արիստոտելի, Շեքսպիրի, Հեգելի, Գերցենի, Պլեխանովի և այլոց գեղագիտական հայացքների լուսաբանմանը: Սակայն, իհարկե, հիմնական ուշադրությունն ուղղված էր Հայաստանում գեղագիտական մտքի պատմությանը:

Հատկանշական է, որ երբ 1943 թ. նոյեմբերին Հայրենական մեծ պատերազմի թեժ պահին միութենական կառավարության որոշմամբ Հայաստանում հիմնվեց Գիտությունների

ակադեմիան, Պատմության ինստիտուտի կազմում ստեղծված Փիլիսոփայության սեկտորի (հետագայում՝ Ինքնուրույն փիլիսոփայության և իրավունքի սեկտոր) պլաններում տեղ գտավ նաև անվանի հայ արվեստաբան և գեղագետ Արշակ Ադամյանի թեման՝ նվիրված միջնադարյան Հայաստանի գեղագիտական հայացքների ուսումնասիրությանը: Այդ հետազոտության արդյունքը եղավ 1955 թ. երկրորդ կեսին հրատարակված շատ արժեքավոր «Эстетические воззрения средневековой Армении. Эпоха раннего феодализма» մենագրությունը, որը հայ գեղագիտական մտքի պատմությունը լուսաբանող առաջին աշխատությունն էր և իր նշանակությամբ դուրս եկավ Հայաստանի սահմաններից՝ ազդարարելով և հայ գեղագիտական մտքի առկայության փաստը և նրա պատմության հետազոտության սկզբնավորումը:

Ա. Ադամյանի սկսած գործը շարունակեց տողերիս հեղինակը, որը պետք է նպաստեր Հայաստանում գեղագիտական մտքի պատմության համակարգված ուսումնասիրությանը:

Անցած շուրջ վեց տասնամյակների ընթացքում այս բնագավառում շոշափելի աշխատանք է կատարվել, լույս են տեսել երկու տասնյակից ավելի մենագրություններ, թեմատիկ ժողովածուներ, գրքեր՝ նվիրված ինչպես առանձին մտածողների գեղագիտական հայացքների, հարցադրումների, այնպես էլ առանձին պատմաաշխատակալից դարաշրջանների գեղագիտական մտքի լուսաբանմանը: Բացի այդ, Մոսկվայում հրատարակված տարբեր անթոլոգիաներում տեղ գտան նաև հատվածներ հայ գեղագիտական մտքի հուշարձաններից: Հրատարակվել էին «Հայ էսթետիկական մտքի պատմությունից» շարունակական գրքաշարի 8 գիրք և «Էսթետիկայի հարցեր» գրքաշարի 5 գիրք, որոնցում տպագրված են նաև հայ գեղագիտական մտքի պատմությունը լուսաբանող գործեր: Տողերիս հեղինակը Մ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի ղեկավարության հրավերով կարդացել է հատուկ դասընթաց:

Բացի այդ, Մոսկվայում հրատարակված «История эстетической мысли» բազմահատորյակի 1-ին (1985) և 5-րդ (1991) հատորներում գետեղված են հայ գեղագիտական մտքի պատմությանը նվիրված բաժինները, որոնք գրել էին մեր աշխատակիցները: Եվ իհարկե, մեծ իրադարձություն էր 1976-ին Մոսկվայում «ԽԱՀՄ ժողովուրդների էսթետիկական միտքը» գրքաշարում լույս տեսած «Очерк развития эстетической мысли в Армении» ծավալուն կոլեկտիվ մենագրությունը, որը լայն արձագանք գտավ և Հայաստանում, և նրա սահմաններից դուրս: Ասվածին ավելացնեն այն, որ գեղագիտության գծով VII դ. միջագային կոնգրեսին (Բուխարեստ, 1968) տողերիս հեղինակը ներկայացրեց զեկուցում՝ «Արվեստ և հասարակություն» (ըստ հայ միջնադարյան գեղագիտության պատմության նյութերի):

Տարիների ընթացքում կատարած ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հայերենով գեղագիտական մտքի պահպանված հուշարձաններից առաջինները վերաբերում են մ.թ. V դ.: Մակայն հիմքեր կան ենթադրելու, որ Հայաստանում գեղագիտական գիտակցության դրսևորումները ծա- գել են ավելի վաղ շրջանում¹: Որոշ, մասնավորապես բանահյուսական աղբյուրների հիման վրա² կարելի է ի հայտ բերել նաև այն, թե ինչպես է աստիճանաբար տեղի ունեցել հայ ժողովրդի գեղագիտական գիտակցության սաղմերի՝ գեղագիտական

¹ Տե՛ս Կ. Գրիգորյանի «Вопросу о протоэстетических представлениях в культуре народов Армянского нагорья (Հայ էսթետիկական մտքի պատմությունից, գիրք 7, Ե., 2008, էջ 65-76)»:

² Տե՛ս Օսիպյան Ա., «Գեղագիտական և բարոյական հայ ազգային գիտակցության մեջ (նույն տեղում, գիրք 8, Ե., 2009, էջ 70-76)»:

գնահատականների, պատկերացումների, զգացմունքների և այլնի կայացումը, որոնք հետագայում հիմք դարձան այս կամ այն գեղագիտական տեսակետների և հայացքների առաջացման համար:

Բացի այդ, մինչև հայ գրերի ստեղծումը երկրում շրջանառության մեջ էին հույն հեղինակների գործերը, ինչպես նաև հայերի՝ հունարենով գրած աշխատությունները, որոնք նույնպես դեր խաղացին հայ ժողովրդի գեղագիտական մտքի ձևավորման ու զարգացման գործում:

V դ. սկզբին Մեսրոպ Մաշտոցի կողմից հայ գրերի ստեղծումը բեկումնային դարձավ հայ ժողովրդի ամբողջ մշակույթի, այդ թվում և գեղագիտական մտքի զարգացման գործընթացում. հայերենով երևան են գալիս թարգմանական և ինքնուրույն բազմաթիվ գործեր, որոնցում շոշափվում էին նաև գեղագիտական հարցադրումներ, և որոնք ստանում էին տեսականորեն ավելի ձևակերպված բնույթ: Այդ հետաքրքրությունը գեղագիտական հարցերի նկատմամբ շարունակաբար պահպանվել է Հայաստանում մինչև այսօր: Ճիշտ է՝ մինչև 1735 թ., մինչև գերմանացի փիլիսոփա Ա. Բաումգարտենի կողմից «Էսթետիկա» (գեղագիտություն) եզրույթի ներմուծումը, գեղագիտական միտքը Հայաստանում, ինչպես և բոլոր մյուս երկրներում, հանդես էր գալիս ոչ թե ինքնուրույն, այլ գիտելիքի մյուս բնագավառների՝ փիլիսոփայության, աստվածաբանության, քերականության, արվեստաբանության, գրականության և այլնի հովանու ներքո:

Այսպիսով՝ գեղագիտության պատմության ուսումնասիրության ասպարեզում մեր ինստիտուտի ամենամեծ ձեռքբերումներից մեկը հայ գեղագիտական մտքի հաստատումն է՝ իբրև գոյություն ունեցող գործընթաց և նրա պատմության ուսումնասիրության ոլորտի կարգավիճակի ձևավորումը՝ իբրև ինքնուրույն գիտություն: Իհարկե, շատ գործ է կատարված, բայց դեռևս կան չլուծված հարցեր և չլուսաբանված խնդիրներ, իսկ նման տիպի նյութի ծավալը շոշափելի է, ինչի պատճառով հայ գեղագիտական մտքի պատմությունը հայագիտության ոչ միայն ամենաերիտասարդ, այլև դեռևս մշակման կարոտ ճյուղն է՝ իր քննությանը սպասող մի շարք հարցերով: Ցավոք, վերջին տարիներին առաջացած կազմակերպչական և կադրային բարդությունների հետևանքով, այդ պատմության ուսումնասիրության ընթացքը դանդաղեց, իսկ ընդգրկման ծավալը սեղմվեց, ինչը դժբախտաբար հետացնում է հայ գեղագիտական մտքի պատմության ամբողջական, ակադեմիական հրատարակումը³: Այնուամենայնիվ, արդեն կատարված աշխատանքի արդյունքները ամփոփված են գեղագիտության խմբի ստեղծման 50-ամյակի կապակցությամբ հրատարակված մատենագիտական տեղեկատուում⁴:

Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում շարունակվում է Հայաստանում գեղագիտական մտքի պատմության հետազոտությունը, իսկ ինստիտուտը շարունակում է մնալ առաջատար օջախ՝ գեղագիտության տեսական հարցերի և հայ գեղագիտական մտքի պատմության հետազոտության բնագավառում:

ԽԱՉԻԿՑԱՆ ՅԱ. Ի.

Փիլիսոփայության դոկտոր

³ Տե՛ս **Խաչիկյան Յա. Ի.**, Հայաստանում գեղագիտական մտքի պատմության հետազոտության վիճակը և հեռանկարները (նույն տեղում, գիրք 7, էջ 8-17):

⁴ Գեղագիտական միտքը Հայաստանում XX-XXI դարասկզբին, մատենագիտական տեղեկատու, կազմող Յա. Ի. Խաչիկյան, Ե., 2012, 88 էջ: